



*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործային  
կարողությունների ձևավորումը*

*առարկայի դասավանդման գործընթացում*

*Առարկան՝ Ծիզիկա*

*Հետազոտող ուսուցիչ՝ Նունե Մկրտչյան*

*Ուսումնական հաստատություն՝ 118 ավագ դպրոց*

*Երևան 2023*

Սովորողների մեջ համագործային կարողությունների ձևավորումը  
առարկայի դասավանդման գործընթացում  
Բովանդակություն

Ներածություն .....	3
Գլուխ 1. Համագործակցային ուսուցման մեթոդները .....	5
Գլուխ 2. Ինչ արդյունավետություն ունի համագործակցային մեթոդի կիրառումը ֆիզիկայի դասաժամին .....	12
Եզրակացություն .....	20
Օգտագործված գրականության ցանկ .....	22

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Համագործակցային ուսուցումը այլընտրանքա -  
յին մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի  
համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև  
դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. **Դրական փոխկախվածություն.** Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու,  
խրախուսելու, աջակցելու մթնոլորտ:

Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն  
նպատակում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:

Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների  
փոխհարաբերություններին:

2. **Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.** Խմբի անդամները համագործակ -  
ցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ,  
մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ  
կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու  
համար:

3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.** Խմբի  
յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու,  
կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի  
մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ,  
պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. **Սոցիալական հմտություններ.** Խմբի անդամների միջև ձևավորվում  
են վարքագծային նորմեր՝

- անադմուկ աշխատանք,
- ներկայություն մինչև աշխատանքի ավարտը,

- խոսողին հետևելը,
- առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5. **Խմբային գործընթաց.** Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

**Թեմայի նպատակը և խնդիրները:** Թեմայի նպատակն է ուսումնասիրել՝ սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորման գործընթացը և դրա կարևորությունը ֆիզիկայի դասավանդման գործընթացում:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ համագործակցային ուսուցման մեթոդները,
- ուսումնասիրել՝ թե ինչ արդյունավետություն ունի համագործակցային մեթոդի կիրառումը ֆիզիկայի դասաժամին:

**Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:**

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## **Գլուխ 1. Համագործակցային ուսուցման մեթոդները**

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

- Աշակերտների թիմային առաջադիմությունը,
- Խճանկարը,
- Շրջագայություն պատկերասրահում,
- Երեք բանալին և մեկ կողպեքը,
- Հինգ բոպեանոց ազատ շարադրանքը:

### **Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:**

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը:

Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտ - ներին, և՛ խմբերին: Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար: Այն խթանում է սովորողների համագործակցու - թյունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

### **Ընթացքի նկարագրություն:**

Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տարասեռ խմբերի՝ յուրաքանչյուր

խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով նաև տղա-աղջիկ հավասարությունը (հնարավորության դեպքում):

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը:

Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց. յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը<sup>1</sup>:

Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում: Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը:

Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում:

Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները:

Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

### **Խճանկար (Ջիգսո, Jigsaw):**

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից:

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի,

---

<sup>1</sup> Տե՛ս, Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի 2006, էջ 62-64:

որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում դասընկերներին:

Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

**Նկարագրությունը:** Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:

**Աշխատանք փորձագիտական խմբում:** Փորձագիտական խմբերի սովորողները համեմատում են և հարստացնում իրենց նյութերը:

**Աշխատանք ուսումնական խմբում:** Յուրաքանչյուր «փորձագետ» հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

**Ավարտական աշխատանք:** Սովորողներին անհատական թեմատիկ աշխատանք է հանձնում ամբողջ թեմայից:

**Ամփոփում:** Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Վերոնշյալ փուլերով անցնելիս ուսուցիչը պետք է կատարի հետևյալ քայլերը:

**Քայլ 1. Հենակետային խմբերի ձևավորումը:** Խմբեր ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ:

Այդպես կձևավորվեն ինչպես առաջադիմությամբ, այնպես էլ աղջիկ-տղա իմաստով տարասեռ խմբեր: Խմբերի ձևավորումից հետո հայտարարվում են խմբային աշխատանքի կանոնները:

**Օրինակ՝**

1. Առաջադրանքի իրենց հանձնարարված հատվածն ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչև բոլորն ավարտեն,
2. խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է, որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը,
3. էթե կան հարցեր, անհասկանալի հատվածներ, ապա աշակերտը նախևառաջ դիմում է իր թիմակիցների օգնությանը, հետո, էթե դրա կարիքը կա, նաև՝ ուսուցչին:

Կանոններն ընդունելուց հետո ուսուցիչը ձևակերպում է առաջադրանքը:

Հիմնական խմբերի անդամները, միմյանց աջակցելով, ընթերցում են ամբողջ նյութը, ապա քննարկում անհասկանալի հասկացությունները, հատվածները:

**Քայլ 2. Փորձագիտական խմբերի ձևավորումը:** Երբ աշակերտները ծանոթանում են ամբողջ նյութին, հիմնական (մայր) խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է առաջադրանքը և փորձագիտական թերթիկը: Առաջադրանքը կարող է լինել նյութի առանձին հատվածի ուսումնասիրություն, խնդրի որոշակի ասպեկտի վրա կենտրոնացում: Առաջադրանքը ստանալուց հետո սովորողները հավաքում են նյութեր իրենց ենթաթեմայի վերաբերյալ: Ապա փորձագիտական խմբի անդամների հետ կիսում են իրենց նյութերը, կատարում ճշգրտումներ:

Փորձագիտական խմբի անդամները նաև որոշում են, թե ինչ մեթոդներ, մատուցման եղանակներ, աղյուսակներ, դիագրամներ են օգտագործելու իրենց մայր խմբերի անդամներին սովորեցնելու ընթացքում: Փորձագիտական խմբերում նույնպես պետք է ընդգրկել առաջադիմությամբ տարասեռ աշակերտների:

Կարևոր է նաև փորձագիտական թերթիկների մշակումը<sup>2</sup>:

Դրանք աշակերտներին կօգնեն կենտրոնանալ հիմնական հարցերի վրա:

**Քայլ 3. Փորձագետները սովորեցնում են հենակետային խմբի անդամներին:**

Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր ենթաթեման, պարզում, թե որքանով են իր դասընկերները յուրացրել այն:

---

<sup>2</sup> Տե՛ս, Скаткин М.Н., Совершенствование процесса обучения, М.: “Педагогика” 1971, էջ 20-21:



**Քայլ 4. Գնահատում:** Խճանկարի ժամանակ գնահատումը պետք է իրականացնել երեք մակարդակներով: Առաջին՝ պարզել, թե որքանով են խմբերը արդյունավետ գործում, որքանով են բարելավվել սովորողների համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները: Երկրորդ՝ որքանով են աշակերտները առաջադիմել առանձին խնդիրներ ուսումնասիրելու և դրանք իրենց դասընկերներին սովորեցնելու առումներով: Երրորդ՝ որքանով է յուրաքանչյուր աշակերտ յուրացրել ուսումնական նյութը, առաջադիմել:

**Խմբային գործընթացի գնահատում:**

Խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել, թե որքանով են սովորողները արդյունավետ գործել որպես խմբի անդամներ: Սա ներառում է խոսելու, լսելու, մտքերը կիսելու, խմբին օգնելու, աջակցելու հմտությունները:

Օրինակ՝ այդ նպատակով կարելի է տալ հետևյալ հարցերը.

1. արդյոք խմբի բոլոր անդամներն էին մասնակցում աշխատանքին,
2. իբրև կային գերիշխող աշակերտներ (կեղծ լիդերներ),
3. խմբային հաղորդակցումը աջակցող էր:

**Փորձագիտական աշխատանքի գնահատում:**

Այս դեպքում գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանք կատարելու հմտությունները: Օրինակ՝ ուսումնական նյութերի, սկզբնաղբյուրների, մոդելների հետ աշխատելու, չափումներ, նշումներ կատարելու, աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ կազմելու միջոցով ձեռքի տակ եղած նյութը մշակելու և դասընկերներին սովորեցնելու հմտությունները:

**Նյութի բովանդակության յուրացման գնահատում:**

Գնահատման այս ձևը կիրառելիս անհրաժեշտ է օգտագործել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդում ներկայացված գնահատման նմուշը:

Գնահատվում են և՛ առանձին աշակերտները, և՛ խմբերը: Վերջում անհրաժեշտ է ամփոփել արդյունքները, խրախուսել առաջադիմած աշակերտներին ու խմբերին:

**Շրջագայություն պատկերասրահում:**

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործա -

բար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

**Ընթացքը:**

- Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասերի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ինքնուրույն ուսումնասիրելու:

Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

- Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ուսումնական նյութի իրենց տրված մասի վրա (ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն) և ստացված արդյունքները մշակում նկարի, կոլաժի, աղյուսակի, դիագրամի կամ գրաֆիկի տեսքով:
- Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի կամ միջանցքի պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»<sup>3</sup>:
- Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների (դասարանի բոլոր «1» համարի աշակերտները՝ մեկ խումբ, «2»-ները՝ ուրիշ խումբ և այլն):
- Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքան - չյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ կատարելով գիդի դեր, մանրամասն ներկայաց - նում է իրենց աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ:

Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը, միևնույն ուղղությամբ «սահելով» ցուցանմուշների մոտով, ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

- Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական (մայր) խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

**Երեք բանալի և մեկ կողպեք:**

---

<sup>3</sup> Տե՛ս, Վարդույան Ս., Ջաղիկյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 24-25:

Աշխատանքը կարելի է կատարել գույգերով կամ խմբով:

Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

**Հինգ բույեանոց ազատ շարադրանք:**

Հինգ բույեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ բույեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

## **Գլուխ 2. Ինչ արդյունավետություն ունի համագործակցային մեթոդի կիրառումը ֆիզիկայի դասաժամին**

Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Թեև այս մեթոդի հեղինակը Թեյ-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շարոնն է, բայց մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուիի տեսությունից:

Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում:

Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

1. խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները,
2. պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը,
3. սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում<sup>4</sup>:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգացնում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

### **Ընթացքը:**

---

<sup>4</sup> Տե՛ս, Ուսումնառությունն ու դասավարդումը կրտսեր դպրոցում, Այրեքս, Երևան 2011, էջ 28-29:

### **Քայլ 1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը:**

Խմբերի ձևավորման և թեմայի ընտրության հերթականությունը կարելի է փոխել: Որոշ դեպքերում ուսուցիչը կարող է ընտրել թեմաներ, ապա նոր, ըստ աշակերտների հետաքրքրության, ձևավորել խմբեր: Այլընտրանքն այն է, երբ նախ ձևավորում են խմբերը, ապա սովորողներն իրենք են ընտրում հետազոտության թեման:

Այս տարբերակը նրանց հնարավորություն է տալիս զարգացնելու դասընկերների հետ բանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները:

Երբ խմբերը ձևավորված են ու հետազոտության թեմաներն ընտրված, անհրաժեշտ է անցկացնել թիմ (խումբ) ձևավորող վարժություն, որոնք կարևոր միջոց են համագործակցային ուսուցումը արդյունավետ դարձնելու ճանապարհին:

Ստորև ներկայացնենք թիմ ձևավորող վարժությունների օրինակներ:

#### **Վարժություն - Նկարագրություն**

**Սիրած զբաղմունք** - Խմբի անդամները միմյանց հարցնում են իրենց սիրած երաժշտության, սպորտի, նախասիրության մասին:

**Կենսագրություն** - Խմբի անդամները միմյանց հարցնում են կենսագրական տվյալների մասին:

### **Քայլ 2. Խմբային աշխատանքի պլանավորումը:**

Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը, նախանշում են ռեսուրսները, մշակում գործողությունների պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները:

Եթե խմբի բոլոր անդամներն ուսումնասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել՝ ընդամենը որոշելով, թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթա - խմբերի և յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա, ապա անհրաժեշտ է նաև որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքները, ով է պատրաստելու թեմայի ամբողջական ներկայացումը:

### **Քայլ 3. Հետազոտության իրականացումը:**

Սա խմբային հետազոտության ամենակարևոր փուլն է:

Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ, հավաքում տեղեկատվություն:

Այս ընթացքում ուսուցիչը, պարբերաբար շրջելով (սահելով) խմբերում, պետք է պարզի, թե ինչ են անում աշակերտները, ինչ աջակցության կարիք ունեն:

**Քայլ 4. Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում:**

Աշակերտները այս փուլում վերլուծում և գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը, իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց:

Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա, թույլ չտալ շեղվել թեմայից: Ոչ պակաս արդյունավետ է նաև աջակցության ամենահումանիստական ձևը՝ աջակցել խրախուսելով: Կարելի է նաև խորհուրդ տալ աշակերտներին իրենց ստացած արդյունքները ներկայացնելիս պարբերաբար օգտվել աղյուսակներից, դիագրամներից և գրաֆիկներից:

**Քայլ 5. Հետազոտության արդյունքների ներկայացում:**

Այս փուլն ունի երկու հիմնական նպատակ<sup>5</sup>

1. լուսաբանել կատարված հետազոտությունը, և
2. կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել այն:

Հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, բանավոր-գրավոր, պատկերային ձևով (օրինակ՝ համակարգչային մշակմամբ, ցու - ցապաստառներով, արտարկտ նկարով կամ կոլաժով): Նշենք, որ նախընտրելի է բազմազան ձևերի օգտագործումը:

**Խմբային հետազոտության գնահատումը:**

Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

1. հետազոտական հմտությունների,
2. խմբային (համագործակցային) հմտությունների,
3. բովանդակության յուրացման:

**Բովանդակության յուրացման գնահատումը:**

Ավանդական մեթոդներով աշխատող ուսուցիչների հիմնական գործունեությունը սովորողների յուրացրած նյութի բովանդակության յուրացման աստիճանի ստուգումն ու գնահատումն է:

---

<sup>5</sup> Տե՛ս, Հովհաննիսյան Ա., Հարությունյան Գ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան «Անտարես» հրատ., 2006, էջ 23-24:

Համագործակցային եղանակով աշխատող ուսուցչի համար նույնպես շատ կարևոր է պարզել, թե որքանով են աշակերտները յուրացրել իրենց հետազոտած նյութը: Ուսուցիչը դա կարող է գնահատել՝ հիմնվելով աշակերտների ներկայացման վրա: Կարելի է նաև նրանց հարցաթերթիկ տալ, հանձնարարել թեմատիկ (ստուգողական) աշխատանք, ռեֆերատ կամ շարադրություն:

Այժմ կիսվեմ իմ փորձով և օրինակ ցույց տամ “Անկյուններ” թեմայի հիման վրա: “Անկյունները” համագործակցային ուսումնառության մեթոդներից է, որի նպատակը բանավեճի ծավալման և խմբային աշխատանքի միջոցով կառուցողական եզրակացությունների ձևավորումն է: “Անկյունները” կարող են դառնալ երկու և ավելի տեսակետներ հարուցող, հակասական հարցերի շուրջ ծավալված բանավեճերի կառավարման զվարճալի և ակտիվ միջոց: Դասի ընթացքում նրանով կարող է հաջորդել տեքստի ընթերցումը, դասախոսությունը, ֆիլմի դիտումը, դասի ամփոփումը կամ պարզապես աշակերտներին հետաքրքրող որևէ թեմայի քննարկումը:

“Անկյունների” քայլերը բավականին պարզ են: Դրանց իմաստը կայանում է նրանում, որ աշակերտները որևէ խնդրի վերաբերյալ ընդունեն որևէ դիրքորոշում և կարողանան այն հիմնավորել և պաշտպանել:

Այս մեթոդը աշակերտներին խրախուսում է լսել դիմացիների մտքերն ու փաստարկները և, նրանց տրամաբանությունն ընդունելու դեպքում, փոփոխել սեփական պատկերացումը կամ ևս մեկ անգամ համոզվել, որ իրենց կարծիքը ճիշտ է:

**Քայլ 1:** Թեման կամ խնդիրն ընտրելուց հետո աշակերտներին պետք է բացատրել, որ նրանցից պահաջվում է խորհել այդ թեմայի մասին և ընդունել որևէ նախնական դիրքորոշում:

**Քայլ 2:** Պետք է որոշել, թե մասնակիցները կոնկրետ ինչ դիրքորոշում կարող են ընդունել տվյալ խնդրի վերաբերյալ: Կարևոր է աշակերտներին առաջարկել դիրքորոշման երկու-երեք տարբերակ:

Ուսուցիչը կարող է դիրքորոշումները սահմանել նախօրոք, կարելի է նաև աշակերտների հետ մտավոր գրոհի միջոցով հանգել մի քանի տեսակետների:

**Քայլ 3:** Ձևակերպել գրավոր փաստարկ (հիմնավորում) իրենց ընտրած դիրքորոշման օգտին մոտ 5 րոպեի ընթացքում՝ փորձելով լինել որքան հնարավոր է համոզիչ և հետևողական:

**Քայլ 4:** Գրառումն ավարտելուց հետո, “կողմ” դիրքորոշում ընտրած աշակերտներին խնդրել հավաքվել սենյակի մի անկյունում, իսկ “դեմ” դիրքորոշում ընտրած աշակերտներին՝ մյուս անկյունում:

Նրանք, ովքեր որոշակի դիրքորոշում չունեն, թող զբաղեցնեն սենյակի երրորդ անկյունը: Եթե ձևավորվեն նաև այլ տեսակետներ, ապա դրանց կողմնակից խմբերն էլ պետք է առանձնանալու համար տեղ ունենան:

**Քայլ 5:** Մոտ 5 րոպե յուրաքանչյուր խմբի աշակերտները միմյաց հետ պետք է փոխանակվեն իրենց փաստարկներով, քննարկեն և ընտրեն իրենց դիրքորոշումն ամրապնդող ամենահամոզիչ փաստարկները:

Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի խոսնակների, որոնք կներկայացնեն խմբի կարծիքը ծավալվելիք բանավեճի ընթացքում:

**Քայլ 6:** Բանավեճը կարելի է սկսել՝ խնդրելով խմբերից մեկի խոսնակին հստակ ներկայացնել իրենց դիրքորոշումը՝ ներկայացնելով լավագույն հիմնավորումն ապահովող որոշիչ փաստարկները:

Մյուս խմբերն էլ ներկայացնում են իրենց աշխատանքները:

**Քայլ 7:** Երբ խոսնակներն ավարտեն բանավեճի “պաշտոնական” մասը, խմբերի մյուս անդամներին նույնպես կարելի է ներգրավել քննարկումներին: Եթե խումբը օգնության կարիք ունի, առաջարկեք մի քանի խրախուսող հարցեր:

Ինչո՞ւ դուք՝ Ա խմբի աշակերտներդ, չեք համաձայնում Բ խմբի կարծիքին:

Բ խմբի ասածների հատկապես ո՞ր մասի հետ համաձայն չեք:

Իսկ կարծիք չունեցողներն ի՞նչ կասեն:

Այստեղ հնչած փաստարկները ստիպեցի՞ն՝ ձեզ հակվել այս կամ այն հստակ դիրքորոշմանը:

Ինչո՞ւ Բ խմբի անդամների համար Ա խմբի փաստարկները համոզիչ չեն:

**Քայլ 8:** Սովորողներին պետք է բացատրել, որ քննարկման ընթացքում իրենք կարող են փոխել իրենց կարծիքը և ազատ կերպով փոխել խումբը: Դրա համար նրանք պարզապես պետք է նախկին համախոհների անկյունից տեղափոխվեն այն անկյունը, որի դիրքորոշումն այժմ ավելի համոզիչ է:



**Քայլ 9:** Քննարկումն ավարտելուց և վերջնական խմբերում տեղ գրավելուց հետո խնդրեք յուրաքանչյուր խմբին ամփոփել իրենց դիրքորոշման ձևակերպումը և այն հիմնավորող փաստարկները:

### **Մեկնաբանություններ**

Այս մեթոդը ներառում է մի քանի քայլ, որոնք պահանջում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանք:

Օրինակ, աշակերտներին առաջարկվում է անհատական կարծիք ձևակերպել հարցի վերաբերյալ: Սա ենթադրում է, որ աշակերտը մինչ ուրիշներին լսելն արդեն բավականին գիտելիք ունի տվյալ ասպարեզում և, ակտիվացնելով իր մտքի աշխատանքը, նա պատրաստ է ձևակերպել իր դիրքորոշումը: Չնայաց ոմանց համար այս քայլը կարող է լինել բավականին դժվար, սա գործընթացի կարևորագույն քայլերից մեկն է, որովհետև հայտնի փաստ է, որ սովորող մարդը առավել շահագրգիռ կերպով է ներգրավվում ուսման գործընթացին, եթե քննարկվող նյութի նկատմամբ որոշակի վերաբերմունք ունի և կարևորում է խնդիրը:

Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ այս փուլում աշակերտներն արդեն ստիպված են ակտիվացնել եղած գիտելիքներն ու պատկերացումները և արդեն իսկ պատրաստ են լինում նախնական բանավեճի՝ մինչ թեմայի խորագնին ուսումնասիրությունը:

Ընդհանուր առմամբ, “Անկյունները” կշռադատման փուլի մեթոդ է, երբ բոլորը տեղեկացված են թեմայի մասին: Սակայն, անհատական առումով, մտքի աշխատանքը, որ կատարվում է ընթացքում, կարող է դասվել նաև խթանման փուլի հատուկ գործողությունների թվին: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտից պարտադիր պահանջվում է համոզված կերպով ընտրել դիրքորոշումներից որևէ մեկը: Տեսակետների հրապարակումը նրանց ավելի որոշակիորեն է դասում կոնկրետ դիրքորոշման ջատագովների շարքը, որն ակնառու կերպով ցույց է տալիս, որ յուրաքանչյուրը կարծիք ունի, և այդ կարծիքները հավասարապես հաշվի են առնվում:

Այս մեթոդում առավել կարևորվում է այն, որ աշակերտներին թույլ է տրվում հրապարակայնորեն փոխել դիրքորոշումը: Աշակերտները պետք է հասկանան, որ մտքի աշխատանքը շարունակական գործընթաց է և կարող է տարբեր դեպքերում հանգեցնել տարբեր եզրահանգումների, և որ կարծիք փոխելը մտածողության

բնականոն արդյունքն է: Նրանք պետք է հասկանան, որ կարծիքի փոփոխությունը լրջամիտ և ուշադիր մտածողության բնական և կանխատեսելի հետևանք է: Այս աշխատանքը աշակերտներից պահանջում է նաև իրենց մտքերի հստակ, պարզորոշ արտահայտելու կարողություն:

Անշուշտ, կարևոր է կարծիք ունենալը, բայց դա արժևորվում է միայն այն դեպքում, երբ ուրիշներին հաղորդվում է հստակ, իմաստավից, հիմնավորված և հասկանալի:

Խմբի դիրքորոշումն ամփոփելը և հիմնավորելը, ինչպես առաջարկվում է քայլ 9-ում, կշռադատման փուլի վարժություն է: Ե՛վ խմբային, և՛ անհատական վարժությունների կատարումն ամրապնդում է աշակերտի այն ընկալումը, որ ի վերջո, իրենք են պատասխանատու իրենց կարծիքների և պատկերացումների համար, և որ իրենց տեսակետների հիմնավորումներն իրենք պետք է առաջարկեն, վերհանելով իրենց գիտելիքները քննարկվող հարցի վերաբերյալ: Իհարկե, նրանց տեսակետները սնող աղբյուր կարող են լինել այլոց մտքերն ու գաղափարները, սակայն, վերջ ի վերջո, նրանք պետք է ի վիճակի լինեն սեփական տեսակետն արտահայտել սեփական բառերով:

### **Օրինակ**

**Թեմա.** Շփման ուժի դերը բնության մեջ, տեխնիկայում և կենցաղում:

(Ուսումնական նյութի ամփոփում, ընդհանրացում):

**Դասարան՝** 7-րդ:

**Նպատակը.** քննարկել շփման ուժի դերը բնության մեջ և կենցաղում:

Զարգացնել համեմատելու, առաջնայինը երկրորդականից տարբերելու կարողությունը, խոսքը և մտածողությունը, խմբային աշխատանքներին մասնակցելու, ներդրում կատարելու հմտությունը:

### **Ակնկալվող արդյունքներ**

Այս դասից հետո սովորողը պետք է կարողանա.

- բերել շփման օգտակար և վնասակար ազդեցությունների օրինակներ,
- բացատրել շփման ուժերի առաջացման պատճառները,
- դադարի սահման և գլորման շփումների տարբերությունները,
- համեմատել շփման ուժերի ազդեցությունը տարբեր իրավիճակներում,
- եզրակացություններ կատարել դրա վերաբերյալ:

## **Դասի ընթացքը**

**Խթանում (10 րոպե).** վերհիշել շփման ուժը՝ աշակերտների միմյանց ուղղված հարցերի միջոցով:

Դուրս գրել գրատախտակին բանալի բառերը:

## **Իմաստի ընկալում (30 րոպե).**

1. Ուսուցիչը հարցնում է՝ «վտանգավո՞ր է արդյոք մարդկանց համար շփման ուժի ազդեցությունը կենցաղում, տեխնիկայում և բնության մեջ»: Առկա է 3 տեսակի պատասխան՝ «այո», «ոչ», «երբեմն այո (կախված իրավիճակից)»:
2. Օգտագործելով «Անկյուններ» մեթոդը՝ դասարանը բաժանվում է 3 խմբի (ըստ պատասխանների), խմբերը պատրաստում են իրենց պատասխանների հիմնավորումները:
3. Յուրաքանչյուր խմբից ելույթ է ունենում մեկական խոսնակ՝ պաշտպա - նելով խմբի կարծիքը, օգտագործելով շփման ուժի մասին բոլոր գիտելիքները: Հիմնավորումը առավել հստակ ձևավորելու նպատակով կարելի է թույլ տալ օգտվել դասագրքից:

Առաջանում է բանավեճ: Հնարավոր է, որ որևիցե մեկը փոխի իր կարծիքը:

**Կշռադասում (5 րոպե).** անհրաժեշտության դեպքում կազմվում են նոր խմբեր:

Ուսուցիչը ամփոփում է կատարվածը:

## Եզրակացություն

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ ունենալը, այլև կարևորվում է խմբային զարգացման միջոցով հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ) դառնալը:

Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտություններ):

Համագործակցային ուսուցման նպատակն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժանամանակակից հասարակության մեջ, ինչպես նաև՝ խմբի ակտիվ և համագործակցելուն պատրաստ անդամ:

Համաձայն հետազոտությունների՝ համագործակցային ուսուցումը ուժեղացնում է՝

- համագործակցային հմտությունները (թիմային աշխատանք, սոցիալական հմտություններ),
- տեղեկատվության մշակման հմտությունները (մտածողության հմտություններ),
- բազմազանության (բազմակարծության) ըմբռնումն ու ընդունումը,
- անհատականությունը՝ ինքնավստահությունը և ակտիվ քաղաքացիությունը,
- ստեղծագործական կարողությունները և գործնականությունը:

Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է և ոչ թե պարզապես ավանդական խմբային աշխատանք կամ միայն ինտերակտիվ (փոխներգործուն) վարժություն:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցների տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի 2006
2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան «Անտարես» հրատ., 2006
3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005
4. Ուսումնառությունն ու դասավարդումը կրտսեր դպրոցում, Այրեքս, Երևան 2011
5. Скаткин М.Н., Совершенствование процесса обучения, М.: “Педагогика” 1971

